ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պող 1
+374 12 88 88 88
info@liga.am
www.liga.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործադիր տնօրենի գործունեության գնահատման համակարգը հիմնվում է Ընկերության ռազմավարական նպատակներին հասնելու նրա անձնական արդյունքների վրա, որը հանդիսանում է տնօրենի գործունեության իրականացման առաջնահերթ խնդիրը:

2. Ընկերության երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներին հասնելու գծով Գործադիր տնօրենի արդյունավետ գործունեության հետևյալ քանակական և որակական ցուցանիշները.

3. Քանակական ցուցանիշները.
3.1.Քանակական ցուցանիշները արտացոլում են Ընկերության առջև դրված խնդիրներին և նպատակներին հասնելու մակարդակը, մասնավորապես.
ա) Ապահովագրական գործունեության գծով պլանի կատարման մակարդակը՝ տոկոսային արտահայտությամբ.
բ) Ընկերության ռազմավարական ֆինանսական արդյունքներին հասնելու մակարդակը
գ) Ընկերության աշխատակիցների կողմից ապահովագրական և ֆինանսական գործունեության գծով սահմանված չափանիշների և կանոնների պահպանումը:

4. Որակական ցուցանիշները.
4.1. Որակական ցուցանիշներից են հանդիսանում՝
ա) Գործադիր տնօրենի մասնագիտական գիտելիքների անհրաժեշտ մակարդակը, որն անհրաժեշտ է Ընկերության ռազմավարական նպատակներին հասնելու համար,
բ) Ընկերության գործունեության վրա ազդող ներքին և արտաքին միջավայրերի ազդեցության ճիշտ գնահատումը և դրանց հաշվի առնելը աշխատանքների կազմակերպման ժամանակ,
գ) Ընկերության կողմից մատուցվող ապահովագրական ծառայությունների որակի բարձրացման և իր ներդրումն ընկերության իմիջի ձևավորման և բարձրացման գծով:

5. Գործադիր տնօրենի կողմից Խորհրդին ներկայացվող հաշվետվությունները
5.1. Ընկերության Խորհրդի կողմից սահմանված հաշվետվությունների ձևերով Գործադիր տնօրենը ներկայացնում է.
ա) ՀՀ Գործադիր տնօրենի գործունեության արդյունքների վերաբերյալ " եռամսյակային հաշվետվությունները – յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 30-ը,
բ) ՀՀ Գործադիր տնօրենի տարեկան գործունեության արդյունքների վերաբերյալ " հաշվետվությունը – մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը.
5.2. Գործադիր տնօրենի գործունեության արդյունքների գնահատումը կատարվում և դրա վերաբերյալ համապատասխան որոշում է ընդունվում Ընկերության Խորհուրդի կողմից, հիմք ընդունելով գործադիր տնօրենի գործունեության տարեկան, առանձին դեպքերում սահմանված կարգով՝ եռամսյակային ցուցանիշները:

ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պող 1
+374 12 88 88 88
info@liga.am
www.liga.am

TÜV AUSTRIA CERTIFIED
TÜVRheinland CERTIFIED
ISO/IEC 27001:2013 Management System
www.tuv.com ID 9108645522